

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ունիվերսալ  
վարկային կազմակերպություն փակ  
բաժնետիրական ընկերության  
միակ բաժնետիրոջ՝  
«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերության  
20/04/2018 թ. թիվ 01/18 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկում

Փոփոխված է «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ»  
ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ  
բաժնետիրական ընկերության  
միակ բաժնետիրոջ՝  
«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերության  
09/11/2018թ. թիվ 02 որոշմամբ  
17/07/2019թ. թիվ 03/19 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

(ստորագրություն)

«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՈՒՎԿ ՓԲԸ  
Միակ բաժնետեր «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ  
լիազորված անձ  
Խաչիկ Ներկարարյան

(ստորագրություն)

### ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ունիվերսալ վարկային կազմակերպություն  
փակ բաժնետիրական ընկերություն

նոր խմբագրություն


APPROVED by decision No 01/19 of 20/04/2018 of  
“MIKRO KAPITAL” LLC, sole shareholder of  
“MIKRO KAPITAL ARMENIA”  
universal credit organization closed joint stock company

REGISTERED at the Central Bank

Chairman of the Central Bank of the RA  
Artur Javadyan

Amended by decision No 02 of 09/11/2018 of  
by decision No 03/19 of 17/07/2019 of  
“MIKRO KAPITAL” LLC, sole shareholder of  
“MIKRO KAPITAL ARMENIA”  
universal credit organization closed joint stock company

representative of shareholder “MIKRO KAPITAL” LLC  
Khachik Nerkararyan



(signature)

## CHARTER

“MIKRO KAPITAL ARMENIA” universal credit organization closed joint stock company

New Edition

## ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ
4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՍՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ
5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ
6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ
7. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## CONTENT

1. GENERAL PROVISIONS
2. THE ACTIVITY AND FINANCIAL OPERATIONS OF THE COMPANY
3. THE STATUTORY CAPITAL OF THE COMPANY
4. THE ALIENATION AND PLEDGE OF THE COMPANY SHARES
5. THE MANAGEMENT BODIES OF THE COMPANY
6. THE ACCOUNTINGS, REPORTS AND FINANCIAL CONTROL OF THE COMPANY
7. FINAL PROVISIONS

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. GENERAL PROVISIONS

1.1. «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վարկային կազմակերպության գործունեության իրականացման միջոցով շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնետոմսերի:

1.1. "Mikro Kapital Armenia" universal credit organization closed joint stock company (hereinafter – The Company) is a legal entity founded as a trade organization with a purpose of profiting from the activity of credit organization, the capital of which is divided into the shares with the amounts defined in this charter.

1.2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, «Վարկային կազմակերպությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.2. The company is governed by the civil legislation of the Republic of Armenia, RA law "On Credit organizations" and "On Joint-Stock Companies", other legal acts and this charter during its activity.

1.3. Ընկերության ֆիրմային անվանումն է

1.3. The Company firm name is:

Հայերեն լրիվ/  
In Armenian full:

«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

Կրճատ/In short

«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՈՒՎԿ ՓԲԸ

Ռուսերեն լրիվ/  
In Russian full:

«МИКРО КАПИТАЛ АРМЕНИЯ» универсальная кредитная организация закрытое акционерное Общество

Կրճատ/In short

«МИКРО КАПИТАЛ АРМЕНИЯ» УКО ЗАО

Անգլերեն լրիվ/  
In English full:

«MIKRO KAPITAL ARMENIA» universal credit organization» Closed Joint Stock Company

Կրճատ/In short

«MIKRO KAPITAL ARMENIA» UCO CJSC

1.4. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, Երևան, Պարոնյան 8 շենքի թիվ 1 սառածք:

1.4. The location and legal (postal) address of the Company is premises 1, 8 building, Paronyan str., Yerevan, RA.

1.5. Ընկերությունը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գրանցվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում (այսուհետ՝ ԿԲ):

1.5. The Company is registered in the Central Bank of the Republic of Armenia (hereinafter referred to as CB) as established by RA Law "On Credit organizations". The Company acquires the status of a legal entity and gets a credit organization activity license upon registration.

Գրանցվելու պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և ստանում է վարկային կազմակերպության գործունեության

լիցենզիա:

1.6. Ընկերությունը ունի իր ֆիրմային անվանմամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր:

1.7. Ընկերության գործունեության ժամկետն անսահմանափակ է:

1.8. Ընկերության միակ հիմնադիրն ու բաժնետերն է հանդիսանում Լյուքսեմբուրգում գրանցված «Միկրո Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ընկերության միակ բաժնետերն ունի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով բաժնետիրոջ իրավունքները, ինչպես նաև իրականացնում է սույն կանոնադրությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված բաժնետերերի ժողովի իրավասությունները:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է վարկային կազմակերպության գործունեություն, այն է՝ ներգրավվում է փոխառություններ և (կամ) կնքում Օրենքով սահմանված նմանատիպ գործարքներ և (կամ) տրամադրում վարկեր կամ կատարում Օրենքով սահմանված այլ ներդրումներ:

2.2. Ընկերությունը կարող է իրականացնել Օրենքով վարկային կազմակերպությունների համար սահմանված ֆինանսական գործառնություններ, ներառյալ՝

ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ պարտատոմսերի և հրապարակային օֆերտաներով միջոցների ներգրավման.

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ) տրամադրել երաշխիքներ.

դ) թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել.

ե) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ.

զ) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել

1.6. The Company has a round seal, stamps and blanks with the Company name and symbol.

1.7. The activity term of the Company is unlimited.

1.8. The only founder and shareholder of the Company is “Mikro Kapital” limited liability company registered in Luxemburg.

The only shareholder of the Company has rights of shareholder defined by RA law on Joint-Stock companies and implements the authorities defined by this charter or the shareholders' meeting defined by RA legislation and Charter.

## 2. THE ACTIVITY AND FINANCIAL OPERATIONS OF THE COMPANY

2.1. The Company implements **credit organization activity** as entrepreneurial activity, namely attracts loans and (or) concludes similar transactions defined by Law and (or) provides credits or makes other investments defined by Law.

2.2. The Company may implement the financial operations defined by the Law for the credit organizations, including:

a) to attract loans and (or) conclude similar transactions, except attraction of bonds and funds via public offers,

b) to provide credits, loans, to implement financing of the debts and other commercial transactions, factoring,

c) to provide guarantees,

d) to issue securities, as well as to implement transactions with securities at own its expense and on its behalf,

e) to provide payment services connected with the activity of credit organization,

f) to provide services of financial agent (representative), to administer the investments of other people, to implement entrusted management of property,

հավատարմագրային (լիազորագրային) կառավարում.

ե) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ.

ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն.

ժա) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն.

ժբ) ԿԲ համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

Ընկերության ֆինանսական գործառնություններից բացառություն են կազմում կանխիկ արտարժույթ գնել և վաճառելը, այդ թվում՝ դրամի և արտարժույթի ֆյուչերաների, օպցիոնների և նման այլ գործարքների կնքումը:

Ընկերությունը ֆինանսական գործառնությունները իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

2.3. Ֆինանսական գործառնություններից բացի Ընկերությունն իրավունք ունի իրականացնել վարկային կազմակերպությունների համար Օրենքով և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով չարգելված այլ գործունեություն:

### 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 570 000 000 (հինգ հարյուր յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 30 000 (երեսուն հազար) հասարակ (տվորական) բաժնետոմսերի. մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 19 000 (տասնինը հազար) ՀՀ դրամ:

3.2. Կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

3.3. Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են և պատկանում են Ընկերության միակ բաժնետիրոջը:

g) to purchase, to sell and to administer banking gold and standard bullions and coins,

h) to implement financial leasing,

i) to accept for storage precious metals, stones, jewelry, securities, documents and other valuables,

j) to provide financial consultation,

ja) to create and serve informative center of clients creditworthiness, to implements the activity of debt collection,

jb) to implement activities typical to credit organizations, accepted in the international practice with the consent of the CB.

The purchase and sale of the foreign currency, including conclusion of futures, options of dram and foreign currency, as well as other similar transactions are considered as exceptions from the financial operations of the Company.

The company carries out the financial operations exclusively in non-cash method.

2.3. Besides financial operations the Company is entitled to implement other activity not forbidden for the credit organizations by the Law and CB normative acts.

### 3. THE STATUTORY CAPITAL OF THE COMPANY

3.1. The statutory capital of the Company is AMD 570 000 000 (five hundred seventy million), which is divided into 30 000 (thirty thousand) shares, the nominal value of each share is 19 000 (nineteen thousand) AMD.

3.2. The statutory capital defines the minimum amount of the Company property guaranteeing the creditors interests.

3.3. All shares of the company share capital are distributed, fully paid and owned by the sole shareholder of the Company.

3.4. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է փոփոխվել Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.5. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն հինգ տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

#### 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՎՍԴՐՈՒՄԸ

4.1. Բաժնետոմսի՝ երրորդ անձին վաճառքի դեպքում (բացառությամբ Ընկերության մյուս բաժնետիրոջը օտարելուն) Ընկերության բաժնետերերն ունեն նախապատվության իրավունք վաճառվող բաժնետոմսի նկատմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

4.2. Եթե Ընկերության մեկից ավելի բաժնետերեր ցանկանում են օգտագործել իրենց նախապատվության իրավունքը, նրանցից յուրաքանչյուրը իրավունք կունենա գնել վաճառվող բաժնետոմսի մի մասը մինչև նախապատվության իր իրավունքից օգտվելն իրենց պատկանող քվեարկող բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

4.3. Նախապատվության իրավունքը կարող է միայն իրականացվել ամբողջ առաջարկվող բաժնետոմսերի նկատմամբ, այլ ոչ դրա մի մասի:

4.4. Բաժնետիրոջ կողմից Ընկերության իր բաժնետոմսը (կամ դրա մի մասը) թույլատրվում է փոխանցել (օտարել) երրորդ անձանց միայն բաժնետերերի Ժողովի համաձայնությամբ: Փոխանցման համաձայնության վերաբերյալ որոշումը կայացվում է ժողովին ներկա բաժնետերերի ձայների առնվազն երկու երրորդով:

4.5. Արգելվում է բաժնետիրոջ կողմից Ընկերության իր բաժնետոմսը գրավ դնելը առանց Ժողովի համաձայնության: Գրավադրման համաձայնության

3.4. The statutory capital of the Company may be changed as established by Charter and RA legislation.

3.5. A reserve fund shall be created in a Company, in the amount of 15 percent of equity. If the reserve fund is smaller than the size foreseen by the Charter, then allocations to this Fund shall be made in the amount of at least 5 percent of profit, as well as from the proceeds of the difference between the emission value of new shares and their nominal value.

#### 4. ALIENATION AND PLEDGE OF THE COMPANY SHARES

4.1. In case of the sale of a share to a third party (other than a transfer to another shareholder) the shareholder of the Company have the right of first refusal to the share to be sold in accordance with RA legislation. The timeframe for exercising the right of first refusal is one month.

4.2. If more than one shareholder of the Company wishes to exercise the right of first refusal, then each such shareholder shall be entitled to purchase a portion of the offered amount commensurate to the quantity of voting shares they currently own

4.3. For avoidance of doubt, the right of first refusal can only be exercised in respect of the entire offered share and not in respect of a part of such share.

4.4. A shareholder may transfer the share of the Company (or a part thereof) only with direct consent of the shareholders' Meeting. Resolution relating the transfer of a share is passed with the favorable vote of at least 2/3 of the votes of Company's shareholders represented at the Meeting.

4.5. It is forbidden to pledge a Company share by the shareholder without the direct consent of the Meeting. Resolution relating to pledge of a share

վերաբերյալ որոշումը կայացվում է ժողովին ներկա Ընկերության բաժնետերերի ձայների առնվազն երկու երրորդով:

## 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆՆԵՐԸ.

- 5.1. Ընկերության կառավարման մարմիններն են.
- Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով)
  - Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)
  - Վարչությունը
  - Վարչության նախագահ-Գործադիր տնօրենը:

### ԺՈՂՈՎԸ

5.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Ժողովները հրավիրվում են խորհրդի կողմից: Ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը սահմանում է Խորհուրդը:

5.3. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել հերթական Ժողով՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար: Ժողովը հրավիրվում է Խորհրդի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

is passed with the favorable vote of at least 2/3 of the votes of Company shareholders represented at the Meeting.

## 5. MANAGEMENT BODIES OF THE COMPANY

- 5.1. The management bodies of the Company are:
- Shareholder Meeting (hereinafter Meeting)
  - Directors board (hereinafter Board)
  - Management Board
  - Chairman of Management Board - Executive director.

### THE MEETING

5.2. The highest managing body of the Company is the Meeting, which has the rights of final settlement of any issue relating the management and the activity of the Company.

The Meeting may be ordinary or extraordinary. Meetings shall be called by the Board.

Procedure of preparation and holding of Meeting is defined by Board.

5.3. The Company is obliged to convene ordinary Meeting every year for confirming the annual results of the Company activity. The ordinary Meeting is convened by the Board once in a year during six months after the end of financial year.

Special Meetings shall be held on the basis of a Board decision, either at its initiative or at the request of the executive body of the Company, the controls commission, the external auditor, or a shareholder of at least 10 percent of voting shares of the Company as of the date of filing such request.

5.4. Ժողովի նիստերը կարող են գումարվել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Ժողովի նիստերի մասնակիցները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցիչների միջոցով, որոնք պետք է ներկայացնեն գրավոր լիազորագիր կամ օրենքով սահմանված այլ փաստաթղթեր որոնք կհավաստեն իրենց լիազորությունը:

Ժողովի որոշումները կարող են կայացվել նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված հեռակա քվեարկության կարգով սահմանված կարգին համապատասխան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.5. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե սույն օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

5.6. Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

5.4. The Meeting sessions may be convened both in Armenia and abroad. The members of the Meeting may participate both in person and by the representatives who have to submit a power of attorney granted in writing or present current documents confirming authorization of such other representatives.

The decisions of Meeting may also be made in the order of absentee voting defined by the RA law "On the joint-stock companies" in accordance with the set order, except for cases stipulated by laws.

5.5. A Meeting is eligible (has quorum) if, at the time of completing registration of Meeting participants, the owners (or representatives of owners) of an aggregate of more than 50 percent of the Company's outstanding voting shares have registered.

Meeting decisions are adopted by a simple majority vote of all the owners of voting shares participating in the Meeting, unless a greater vote is required under this Law.

5.6. The Meeting has a exclusive right to make decisions regarding:

a) approve the Charter, amendments and extensions thereto, and a new edition of the Charter;

b) reorganize the Company;

c) liquidate the Company;

d) approve the final, interim, and liquidation balance sheets, and appoint a liquidation commission;

e) determine how many members there shall be in the Board, select them, and implement early termination of their powers; the matters referred to in this subparagraph

f) define the maximum amount of announced shares;

g) increase Company equity by means of increasing the nominal value of shares or allocating additional shares;

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները:

ժ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժա) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

ժբ) օրենքի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժգ) ժողովի վարման կարգը.

ժդ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժե) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժզ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

ժէ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով և կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.

ժը) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

ի) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը կամ մասնակցությունը,

h) reduce Company equity by means of lowering the nominal value of shares, reducing the total number of shares outstanding by the Company, or by means of redeeming shares acquired or bought back by the Company;

i) approve the external auditor of the Company;

j) approve the annual reports of the Company, its accounting reports, profit and loss accounts, and the distribution of profits and losses, as well as decide on the payment of annual dividends and determine the size thereof.

k) according to the law adopt a decision on waiving the right of first refusal of Company shareholders owning Company shares or other securities convertible to Company shares;

l) determine the procedure of operation of the Meeting;

m) appoint an enumeration commission;

n) determine the method the Company will use to deliver information to shareholders, including the selection of a mass media, if the information is to be presented in the form of a public statement;

o) decide on consolidation and fragmentation of shares;

p) decide on consummation of transactions stipulated by law and the charter

q) decide on consummation of transactions in cases foreseen by law and the charter

r) decide that the Company create or participate daughter or dependent companies,

իա) հողինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը կամ մասնակցությունը.

իբ) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը.

իգ) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը:

s) decide to establish or participate holding companies and other associations of commercial organizations,

r) decide that the Company shall acquire outstanding shares and buy them back in cases stipulated hereunder;

u) adopt other decisions stipulated by the RA law on securities market.

5.7. Ժողովը կարող է հրավիրվել պատվիրված կամ փոստի միջոցով ուղարկված նամակի միջոցով, որը պետք է ուղարկվի Ժողովի նշանակման օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ: Պատվիրված կամ փոստի միջոցով ուղարկված նամակի փոխարեն Ընկերության բաժնետիրոջը կարող է ծանուցում ուղարկվել էլեկտրոնային փոստի միջոցով: Հրավերում պետք է նշվի Ժողովի ամսաթիվը, ժամը և վայրը, ինչպես նաև մանրամասն օրակարգը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ տեղեկություններ:

5.8. Եթե բաժնետոմսը պատկանում է մեկից ավելի անձանց, ապա նշված անձիք կարող են բաժնետոմսի հետ կապված իրավունքները իրականացնել համատեղ ներկայացուցչի միջոցով:

5.7. The Meeting shall be called by registered mail letters or letters sent by courier no later than three days before the appointed date of the Meeting. In place of a registered mail letter or a letter sent by courier, a notice may be sent to a shareholder by electronic mail. The invitation should specify the date, time and place, the detailed agenda of the Meeting, as well as other information determined by law.

5.8. If a share is held by more than one person jointly, such persons may only exercise the rights attaching to the share through a joint representative.

#### ԽՈՐՀՈՒՐԴԸ.

5.9. Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության ընդհանուր ղեկավարումը՝ իր իրավասության սահմաններում և կարող է լուծել ցանկացած հարց, որը չի հանդիսանում Ժողովի բացառիկ իրավասությունը կամ Կանոնադրության համաձայն կամ Ընկերության խորհրդի որոշմամբ չի պատվիրակվել Վարչությանը կամ Վարչության նախագահ-Գործադիր տնօրենին:

5.10. Ընկերության Խորհուրդը կազմված է երեք անդամից, որոնց լիազորությունների տևողությունը սահմանափակված չէ: Խորհրդի անդամները նշանակվում և ազատվում են Ժողովի կողմից: Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նախագահը կազմակերպում է Խորհրդի աշխատանքները և նախագահում է նիստերին:

5.11. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի),

#### BOARD

5.9. The Board of the Company implements the general management of the Company within the scopes of its authorities and can settle any issue which is not in the exclusive authorities of the Meeting or has not been delegated to the Management Board or Chairman of Management Board-Executive director according to the Charter or Company Board's decision

5.10. The Company Board is composed of three members, whose authorities term is not limited. The Board Chairman will be elected among the Board members by the Board members by the majority of their general votes number. The Board chairman will organize the Board works and preside the sessions.

5.11. The Board sessions are convened by the Board chairman by the initiative of the Chairman

Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Նիստերը կարող են իրականացվել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Խորհրդի անդամները նիստերին մասնակցում են անձամբ:

Խորհուրդն իրավագոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների 2/3-ը:

Խորհրդի որոշումները ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի 2/3-րդով:

5.12. Խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

գ) ժողովների օրակարգի հաստատումը.

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ,

ե) օրենքով նախատեսված և այլ հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) Ընկերության ֆինանսական տարեկան հաշվետվության նախագծի, ներառյալ՝ շահույթի բաշխման առաջարկի հաստատումը և ներկայացումը Ժողովի վերջնական հաստատմանը.

է) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

ը) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով.

թ) օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

ժ) Ընկերության Վարչության նախագահ-Գործադիր տնօրենի և Վարչության անդամների նշանակում, նրանց իրավասությունների դադարեցում, վարչության անդամների թվի որոշում, ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, Վարչության նախագահ-Գործադիր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի)

of the Board, at the request of a Board member, the Controls Commission, the Company's auditor, the executive body, or a shareholder of at least 10 percent of voting shares of the Company.

The sessions may be convened both in Armenia and abroad. The Board members participate in the sessions in person.

The board is competent in case in case the 2/3 of the members takes part in it.

The Board decisions are made by the 2/3 of the total number of Board members.

5.12. The Board is authorized to resolve the following issues:

a) determine the main areas of Company activities;

b) assemble annual and special Meetings, except for cases specified by the law

c) approve the Meeting agenda;

d) approve the date of preparing the list of shareholders eligible to participate in the Meeting, and resolve all those issues related to the preparation and implementation of the Meeting,

e) present to the Meeting the matters specified by the law

f) increase Company equity by means of increasing the nominal value of shares or allocating additional shares,

g) allocate bonds and other securities, unless otherwise stipulated by the Charter;

h) determine the market price of property according to the law

i) in cases stipulated hereby, acquire outstanding shares, bonds, and other securities of the Company;

j) form the Chairman of Management Board- Executive director and Management Board members, termination of their authorities, form the number of the Management Board members,

աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

ժա) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժդ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժե) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ) Ընկերության և կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժէ) Ընկերության Ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կանոնակարգերի հաստատում.

ժը) Ընկերության մասնաձյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

ժթ) այլ կազմակերպություններին (ոչ կախյալ կամ դուստր) մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից ժողովի կողմից հաստատվող խոշոր գործարք չի ներկայացնում

ի) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր և այլ գործարքների կնաման մասին որոշման կայացումը՝ օրենքով և կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.

իա) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

իբ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իգ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իդ) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

determine the procedure and conditions of remuneration and compensation to the management officials (Board director or member, Chairman of Management Board - Executive director or the Management Board, member of the directorate)

k) prepare recommendations to the Meeting regarding the procedure and conditions of remuneration and compensation to the Company's controls commission (controller);

l) determine the amount of payment to the auditor of the Company;

m) prepare recommendations to the Meeting regarding the size and payment procedure of annual dividends;

n) determine the size and payment procedure of interim (quarterly or semi-annual) dividends;

o) utilize the Company's reserve fund and other funds;

p) approve internal documents regulating the activities of management bodies;

q) create daughter and dependent companies, determine on participation in daughter and dependent companies, if so entitled by the Charter, and if such participation does not represent a large transaction;

r) create Company branches, representative offices, and institutions;

s) participate in other organizations, unless such participation represents a large transaction;

t) enter into large transactions on alienation and acquisition of Company property in cases stipulated by the law and the charter

u) approve the organizational structure of the Company;

v) approve the annual cost estimate and its execution;

w) resolve other issues stipulated by this Law and the Charter.

**ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ-  
ԳՈՐԾԱՂԻՐ ՏՆՕՐԵՆ**

**MANAGEMENT BOARD AND CHAIRMAN OF  
MANAGEMENT BOARD-EXECUTIVE  
DIRECTOR**

5.13. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր մարմնի նախագահը՝ Վարչության նախագահ-Գործադիր տնօրենը: Վարչությունը հաշվետու է Խորհրդին ու Ժողովին:

5.13. The management of the current activity of the Company is implemented by the director of the Company's executive body: the Chairman of Management Board - Executive director., The Management Board is accountable towards Board and the Meeting.

5.14. Վարչությունը Ընկերության կոլեգիալ գործադիր մարմին է, որն ունի 3-ից 9 անդամ, անդամների թիվը սահմանվում է Խորհրդի կողմից: Գործադիր տնօրենն ի պաշտոնե հանդիսանում է Վարչության անդամ և Վարչության նախագահ ու պատասխանատու է Վարչության գործունեության համար: Վարչության անդամները Վարչության նախագահ-Գործադիր տնօրենի ներկայացմամբ նշանակվում են Խորհրդի կողմից: Խորհրդի անդամները չեն կարող միաժամանակ լինել Վարչության անդամ, սակայն առանց քվեարկության իրավունքի՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, իրավասու են մասնակցել Վարչության նիստերին: Խորհրդի կողմից նշանակվելուց հետո Վարչության նախագահ-Գործադիր տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը ստորագրում է Խորհրդի նախագահը: Վարչության անդամների հետ աշխատանքային պայմանագրերը ստորագրում է Վարչության նախագահ-Գործադիր տնօրենը: Վարչության նախագահ-Գործադիր տնօրենը և Վարչության մյուս անդամները պետք է համապատասխանեն ՀՀ կենտրոնական բանկի սահմանած որակավորման պահանջներին:

5.14. The Management Board is the Company's collegial executive body, which is consisted from 3 to 9 members. The number of the members is stated by the Board. The Executive director is ex officio the Management Board member and Chairman of Management Board, and is responsible for the Management Board activity. The Management Board members are appointed by the Board with the Chairman of Management Board - Executive director's presentation. The Board members cannot be Management Board members at the same time, but can participate in the Management Board sittings by advisory vote right not voting right. After appointed by the Board, the labor contracts with the Chairman of Management Board - Executive director are signed by the Board director. The Management Board president - Executive director signs the labor contracts with Management Board members. The Chairman of Management Board - Executive director and other Management Board members will have to correspond to the qualification requirements defined by the RA Central Bank.

5.15. Վարչության նիստերն իրականացվում են Վարչության կողմից ընդունված ներքին կանոնակարգին համաձայն: Նիստերը վարում է Վարչության նախագահ-Գործադիր տնօրենը կամ վերջինիս փոխարինող վարչության անդամը: Որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, որոշիչ ձայնի իրավունքը Վարչության նախագահ-Գործադիր

5.15. The Management Board sittings are held according to the internal regulations adopted by the Management Board. The sittings are held by the Chairman of Management Board - Executive director or the other member replacing him/her. The decisions are made by the open votings with the clear majority of votes. The decisive vote right belongs to Chairman of Management Board

տնօրենին է: Որոշումը չի կարող համարվել ընդունված, եթե Վարչության նախագահ-Գործադիր տնօրենը դեմ է քվեարկել: Վարչության կողմից ընդունված որոշումները ստորագրվում են Վարչության բոլոր անդամների կողմից և հաստատվում են Ընկերության կնիքով:

5.16. Վարչության իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

ա) Վարչության նախագահ-Գործադիր տնօրենի կամ Վարչության անդամի ներկայացմամբ հաստատում է Ընկերության ներքին ընթացակարգերը, վարկավորման և սպասարկման պայմանները, փաստաթղթերի տիպային օրինակները (ձևերը) և այլ ներքին փաստաթղթերը՝ բացառությամբ Վարչության նախագահ-Գործադիր տնօրենի, Ժողովի կամ Խորհրդի կողմից հաստատվող փաստաթղթերի.

բ) Մինչև խորհրդի հաստատմանը ներկայացնելը քննարկում է Ընկերության ծառայությունների նոր տեսակները և նոր գործառնությունների ու գործունեության իրականացման կարգը՝ Ընկերության Կանոնադրությամբ նախատեսված շրջանակներում.

գ) Մինչև խորհրդի հաստատմանը ներկայացնելը քննարկում է Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

դ) իրականացնում է Ընկերության ընթացիկ ղեկավարման հետ կապված այլ գործառնություններ, որոնց իրականացումը վերապահված չէ Ընկերության մյուս կառավարման մարմիններին կամ Վարչության նախագահ-Գործադիր տնօրենին, և/կամ որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

5.17. Ընկերության Վարչության նախագահ-Գործադիր տնօրենը

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված դեպքերում ստանալով Ժողովի կամ Խորհրդի համապատասխան որոշումը (համաձայնությունը).

բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի

- Executive director. The decision cannot be considered to adopted if the Chairman of Management Board - Executive director had voted against it. All the decisions adopted by the Management Board are signed by all the Management Board members and are submitted with the Company's seal.

5.16. These issues are under Management Board authorization:

a) Confirms the internal procedures, crediting and service terms, typical examples of documents (forms) and other internal documents, expect the documents to be confirmed by Chairman of Management Board - Executive director the Meeting and Board;

b) Before presenting to the Board's submission, discusses Company's services' new types, and the regime of new functions and activity in the defined scopes of the Company's Charter;

c) Before presenting to the Board's submission, discusses Company's internal labor regulations, the regulations of the separated subdivisions, the Company's administrative-organizational structure, the staff-list;

d) Implements other functions related to the management of the company, the implementation of which is not under the Company's other managing bodies or Chairman of Management Board - Executive director or which are stipulated by the law.

5.17. The Chairman of Management Board - Executive director of the Company:

a) Manages Company property, including cash, and enters into transactions on behalf of the Company; receiving the relevant law or decision (consent) of the Meeting or the Board in cases stipulated by the statute;

b) Represents the Company in the Republic of

Հանրապետությունում և արտասահմանում.

զ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

է) Վարում է Վարչության նիստերը, Վարչության քննարկմանը և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված

ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է իրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

ժա) Խորհրդի կողմից հաստատված հաստիքացուցակի համաձայն հաստատում է աշխատողների աշխատավարձերի չափերը.

ժբ) Նշանակման համար Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Վարչության անդամների թեկնածությունները.

ժգ) իրականացնում է Ընկերության ընթացիկ ղեկավարման հետ կապված այլ գործառնություններ, որոնց իրականացումը վերապահված չէ Ընկերության մյուս կառավարման մարմիններին կամ որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

5.18 Ընկերության Վարչության նախագահ-Գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի եւ հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական եւ վիճակագրական հաշվետվություններն օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաեւ Ընկերության

Armenia and abroad;

c) Acts without a power of attorney;

d) Issues powers of attorney;

e) Enters into contracts, as designated, including labor contracts;

f) Opens Company bank accounts (including forex accounts);

g) Holds the Management Board sittings, submits to the Board for approval and the Management Board for discussing the internal labor regulation of the Company, the by-laws of separated subdivisions, the organizational structure of the Company, and the staff/payroll lists;

h) As entitled, issue decrees, orders, compelling instructions, and monitor their enforcement;

i) in the established manner, recruit and dismiss Company staff;

j) Applies encouragement and discipline-related liability in regards to employees;

k) Confirms the salary sizes of the Employees according to the staff-list confirmed by the Board;

l) Presents members of Management Board' candidates to the Board for the appointment;

m) implements other functions related to the management of the company, the implementation of which is not under the Company's other managing bodies or which are stipulated by the law.

5.18. The Chairman of Management Board - Executive director shall be responsible for organization of accounting, its condition and truthfulness, the timely submission of the annual report, financial and statistical reports to the public administration bodies stipulated by laws and other legal acts, as well as the truthfulness of Company-related information provided to Company shareholders, creditors, and the mass media, as required by laws, other legal acts, and

բաժնետերերին, պարտատերերին եւ մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին  
Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների  
հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական  
ակտերին եւ կանոնադրությանը համապատասխան:

#### ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄ

5.19. Օրենքով սահմանված խոշոր գործարքները կնքվում են Խորհրդի կամ Ժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես, այն գործարքների մասին որոշումները, որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի Խորհրդի կողմից միաձայն, իսկ 50 տոկոսից ավելին կազմելու դեպքում՝ Ժողովի կողմից:

5.20. Օրենքով սահմանված շահագրգռվածության առկայությամբ գործարքները կնքվում են Խորհրդի որոշմամբ:

5.21. Բացի խոշոր և շահագրգռվածության առկայությամբ գործարքներից, բոլոր այն գործարքները կամ միմյանց հետ փոխկապակցված մի քանի գործարքները, որոնք Ընկերության համար կնքման պահից մեկ տարվա ընթացքում առաջացնում են 25,000,000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ (կամ համարժեք արտաժույթ ԿԲ փոխարժեքով) ավել ֆինանսական (դրամային) պարտավորություններ, կնքվում են Խորհրդի որոշմամբ (համաձայնությամբ):

#### 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՍՈՒՄՆԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄՆԸ ԵՎ ԱՌԻՂԻՏԸ

6.1. Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում ՀՀ օրենսդրության և ԿԲ կողմից սահմանված պահանջներին համապատասխան: Ընկերության հաշվապահական հաշվառումը վարում է գլխավոր հաշվապահը, ով իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

the Charter.

#### COMPANY TRANSACTIONS

5.19. The large transactions defined by law are concluded by the decision of the Board or Meeting as defined by law. Particularly, the decision on those transactions the price of which amounts to from 25 to 50 percent of the balance value of the Company assets as of the moment of making the decision on the transaction conclusion, should be made by the Board unanimously, and in case of exceeding 50 percent, the transaction concluded by the Meeting decision.

5.20. The transactions with the interest defined by law are concluded by the Board decision.

5.21. Besides the large transactions and transactions with interest, all those transactions or several interrelated transactions which arise financial (monetary) obligations of more than 25 000 000 AMD (or equivalent foreign currency with CB exchange rate) for the Company within one year upon conclusion, are signed by the Board decision (agreement).

#### 6. THE ACCOUNTINGS , REPORTS FINANCIAL CONTROL AND AUDIT OF THE COMPANY

6.1. The Company keeps the accounts in accordance with the requirements defined by the RA legislation and CB. The chief account is keeping accounts of the Company, who implements the rights and obligations defined by the RA law "On the Accounting".

6.2. Ընկերությունը կազմում և օրենքով սահմանված ժամկետներում հրապարակում է տարեկան ֆինանսական, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտադիր այլ հաշվետվություններ:

6.3. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի գործառույթները կատարում է վերստուգողը, ով նշանակվում է Ժողովի կողմից 3 (երեք) տարի ժամկետով: Ընկերության վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսական գործունեության վերահսկումը, ներառյալ՝ Ընկերության ֆինանսատեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը: Վերստուգողը ստուգում է Ընկերության ֆինանսատեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ, Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կամ Վարչության նախագահ-Գործադիր տնօրենի պահանջով:

6.4. Յուրաքանչյուր տարի Ընկերության ֆինանսատեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով սուղիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի, որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

## 7. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով և Ժողովի որոշումներով:

7.2. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

7.3. Սույն կանոնադրությունը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

6.2. The Company prepares and publishes annual financial, as well as other obligatory reports defined by RA legislation and CB normative legal acts in the terms defined by law.

6.3. The functions of the Controls Commission is executed by the Controller, who shall be elected by the Meeting for three-year term. The Controller of the Company controls the financial activities of the Company, including inspects the results of the annual financial performance of the Company.

The Controller shall inspect the financial activities of the Company either at any time at its sole initiative, or based upon a decision of the Meeting or the Board, as well as at the request of the owner of at least 10 percent of the voting shares of the Company or by the demand of Chairman of Management Board - Executive director.

6.4. Each year an independent auditor having the rights to render audit services in the order defined by the laws and other legal acts is involved by the Company for the purpose of reviewing the financial-economic activity of the Company by signing an appropriate contract with that auditor.

## 7. FINAL PROVISIONS

7.1. The issues not regulated by this charter are regulated by the RA legislation, internal legal acts of the Company and the decisions of the Meeting.

7.2. The Company may be reorganized or liquidated in the cases and order defined by the RA legislation.

7.3. This charter is made in English and Armenian. In case of discrepancy between the Armenian and English versions of the charter, the Armenian version shall prevail.